— Մեր, տիրոջ մեղաւոր ծառաներիս, ձեռքումը ոչինչ չկայ. մենք ոչինչ չենք կարող անել: Ամէն ինչ, որ լինում է, աստուծոյ կամքովն է լինում. առանց նրա կամքին տերեւն անգամ ծառից ցած չէ գալիս: Աստուած է ստեղծել բոլոր արարածներին եւ նա է նշանակել բոլորի վիճակները: Օրինակ, եզին ստեղծել է, որ մարդու վարը վարէ, ոչխարին ստեղծել է, որ մարդուն կաթ, կերակուր եւ հագուստ տայ, ձիուն ստեղծել է, որ մարդու ծանրութիւնները տանէ, — այսպէս ամէն մէկին մի բանի համար է ստեղծել աստուած: Բայց մարդը գայլից չէ կարող կաթ եւ բուրդ ստանալ, առիւծին չէ կարող ստիպել, որ իր վարը վարէ, եւ արջին կարող չէ հրամայել, որ իր ծանրութիւները տանէ: Դրանք գազաններ են. դրանց միւս անասունների համար որպէս պատիժ ստեղծել է աստուած: Դրանք պէտք է յափշտակեն, կեղեքեն, միւսների մսով եւ արիւնով կերակրուեն:

Ես դարձայ դէպի վարժապետս, ոչ աշակերտի երկչոտութեամբ, այլ համարձակ կերպով հարցրի.

— Ի՞նչ համեմատութիւն կայ ձեր ասածների եւ մարդու մէջ:

— Համեմատութիւնը նոյն է, — պատասխանեց տէրտէրը: — Մարդիկ էլ այնպէս են ստեղծուած. մէկը ոչխարային բնութիւն ունի, միւսը գազանային:

— Մենք, հայերս, ո՞ր մէկիցն ենք:

— Մենք Աստուծոյ գառնուկներն ենք, — պատասխանեց նա աւելացնելով աւետարանական խօսքը — «Արածեա՛ զոչխարս իմ» ասաց տէրն մեր Յիսուս Քրիստոս Պետրոս առաքեալին. դրանից երեւում է, որ մենք գազան քրդերի նման չպէտք է լինենք:

Ես տէրտէրի խօսքերի մէջ մի նոր բան չգտայ, արձեալ նոյն քարոզներն էին, որ հազար անգամ լսած էի, բայց այժմ նրանք իմ գլխում չէին մտնում, այժմ ես հասկանում էի, թէ որքա՜ն վնասակար էին նրանք:

Բայց ինձ նոյն րոպէում տանջում էր մի այլ միտք, ես շատ դժգոհ էի, որ տէրտէրը եկաւ եւ խառնեց իմ եւ քեռի Պետրոսի մէջ սկսած խօսակցութիւնը: Նրա պատմութիւնը ծերունի որսորդի անցեալի մասին մնաց անկատար. ես ցանկանում էի մինչն վերջը լսել այս գաղտնածածուկ մարդու կեանքի պատմութիւնը:

Քեռի Պետրոսը ինքն առիթ տուեց շարունակելու ընդհատուած պատմութիւնը:

— Տեսա՞ր, որդի, — ասաց նա, — տէրտէրն էլ նոյնն է խօսում, ինչ որ ես էի ասում քեզ. հեռացի՛ր այս մարդերից, եթէ չես կամենում կորցնել քեզ: